# Նա շատ մեծ մարդ էր...



***Նորոգ հանգուցյալ Ֆադեյ Սարգսյանի հուղարկավորությանը մասնակցում էր նաեւ Հայերի համաշխարհային կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը, որ Մոսկվայից ժամանել էր այդ կապակցությամբ, իր 30 տարվա բարեկամին, ինչպես ինքն ասաց, վերջին հրաժեշտը տալու:***

«Իսկապես մեծ, շատ մեծ մարդ կորցրեցինք, թաղումից հետո ասաց **Արա Աբրահամյանը** մեր թղթակցին: Մենք դեռ չենք գիտակցում մեր կորուստը: Ֆադեյ Տաճատիչը իսկական լեգենդ է, նա խորհրդանշում է, Կարեն Սերոբիչի հետ, մեր հանրապետության ամենածաղկուն շրջանը: Ծաղկուն՝ արդյունաբերությամբ, գիտարտադրական մեծագույն նվաճումներով: Նրա դերը առաջնային էր այդ բոլորի մեջ. չկար այնպիսի հարց, որը Կարեն Սերոբիչը դներ նրա առաջ եւ նա չլուծեր լավագույն կերպով: Գիտարտադրական հզորություններ, 7000 աշխատակիցներով ռազմարդյունաբերական գործարաններ, գյուղատնտեսական խոշոր ծրագրեր, սահմանամերձ շրջանների հեռահար զարգացման պլաններ... Նա կոփվել էր Հայրենական մեծ պատերազմի, բլոկադայի կրակներում, հարազատ եղբորն էր կորցրել, իսկայական կամք եւ աշխատասիրություն էր կուտակել, գործ կազմակերպելու հմտություն էր ձեռք բերել, բազմակողմանի զարգացում: Նա իմ ավագ ընկերն էր, մի մարդ, որ մի ողջ սերունդ կրթեց, ճանապարհ բացեց երիտասարդ ու տաղանդավոր գիտնականների ու գործիչների համար: Նա հիմա էլ, իր մահվանից հետո, շարունակում է դաստիարակել մեզ, ճանապարհ ցույց տալ: Այդ իմաստով մենք չունենք մի երկրորդ անուն, որ նրա անվան կողքը դնենք: Եթե ինձ հարց տային, թե ո՞ւմ կուզեի նմանվել, ես առանց վարանելու Ֆադեյ Տաճատիչի անունը կտայի: Ցավոք, երկրորդը չունենք: Նա մի ամբողջ դարի հայոց պատմությունն է խորհրդանշում՝ կոփված տառապանքներում, նպատակասլաց՝ հայրենի պետության հզորացման գործում: Նա, իրոք, շատ մեծ մարդ էր»: